# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2017 թվականի N 1507 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները՝

1) լուծարել՝

ա. բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչությունը,

բ. իրավաբանական վարչությունը,

գ. արտաքին կապերի վարչությունը,

դ. հավատարմագրման և լիցենզավորման գործակալությունը,

ե. «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալությունը.

2) ստեղծել՝

ա. իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչություն,

բ. արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչություն,

գ. շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչություն:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 259-Ն որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի հավատարմագրման և լիցենզավորման գործակալություն ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի հավատարմագրման և լիցենզավորման գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 531-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություն կատարելու մասին» N 1131-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» N 1528-Ն որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության ստորաբաժանումներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 1086-Ն որոշումը:

4. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 5
Երևան



Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 30-ի N 1507 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 3-ի N 259-Ն որոշման

Կ Ա Ռ Ու Ց Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

## I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

Իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչություն

Արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչություն

Ֆինանսատնտեսագիտական վարչություն

Անձնակազմի կառավարման վարչություն

Ներքին աուդիտի վարչություն

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչություն

Քարտուղարություն

Առաջին բաժին

## II. Առանձնացված ստորաբաժանումներ

Փրկարար ծառայություն

Պետական ռեզերվների գործակալություն

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

